

կնճռոտ կերպարանք է ստանում. արդեօք նեստորական կաթողիկոս Մար-Աբայի գրութեան է «Ժամանակագրութիւնը». թէ միայն նրան են վերագրել:

Եթէ Մար-Աբան վեցերորդ դարու հեղինակ է, ուրեմն Անանուէն ու Խորենացին միեւնոյն կամ աւելի ուշ ժամանակի պատմադիրներն են:

Ինչո՞ւ և ի՞նչպէս է Խորենացին իւր ժամանակակից մի հեղինակի գրութեանը տանում հասցնում Վաղարշակի օրերը...: Գորդեան հանգոյցը չլուծուեց:

Բ. Բիչ.

Dr. Antonius. Վարդապետ. Լեհաստանի հայերի պատմութեան վերջին երեսը. Թարգ. Մ. Բարխուդարեան: 8^o 47 էջ. Բագու 1903 թ. գ. 20 կ.:

Հայոց պատմութեան տխուր էջերից մէկն է Լեհաստանի հայ գաղթականների դաւանափոխութիւնը և ապա համարեա թէ ամբողջովին ոչնչացումը: Բացի տխուր լինելուց այս դաւանափոխութեան իրողութիւնը նոյն իսկ զգուշի է, որովհետեւ տեղի ունեցաւ ընձի կերպով, առանց ժողովրդի ցանկութեան ու հաճութեան: Կաթողիկոսութիւնը վիժեց Նիկօս անուշով դաւաճանին, որ մի ամբողջ ժողովրդի կորստեան պատճառ եղաւ: Լեհաստանի հայ ժողովրդի կաթոլիկ դառնալու պատմութիւնը, որ հրատարակեց պ. Կ. Սպեանը «*Ընձի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ*» անունով, մանրամասն նկարագրում է կաթոլիկների լարած որոգայթները՝ բռնի կերպով իւր հարազատ եկեղեցու գրկից դուրս խելու հայրենի օջաղից հեռացած մի բաւոն ժողովրդին, որ օտար պետութեան մէջ անգամ ապրում էր իւր ազգային, անկախ սովորութիւններով և նոյն իսկ սեպական օրէնսդրութեամբ, որ վաւերացուած էր լեհացի Թագաւորներից և կառավարութիւններից:

Նրբ կամենեց քաղաքի հայերը դեռ քաջութեամբ դիմագրում էին դաւաճան Նիկօսի ապօրինի հրամաններին և պաշտպանում իրենց հարազատ, դարերով պաշտած ու սիրած, կաթողիկոսութիւնից շատ աւելի ազատ սկզբունքների վրայ հիմնուած և ներդաւար եկեղեցին, հանդէս եկաւ այդ քաղաքի հայոց

կուսաստանի մայրապետ Սեֆերովիչը և իւր ազդու, կրակոտ ճառերով խրախուսում և ոգևորում էր իւր ազգակիցներին՝ դիմադրել Նիկոլի խարդաւանանքներին և չհեռանալ հարազատ մօրից, մայր Հայաստանի արիւնաներկ և կիսաւեր տաճարներում դարերով պաշտուած ու հայ ժողովրդի արեան զնով պաշտպանուած սուրբ եկեղեցուց:

Ահա այս անձնուէր հայ կնոջ ոգևորուած գործողութեան մասին է խօսում լեհացի դր. Անտօնին «Nowe Opowiadania Historyczne» աշխատութեան «Wartabied» հատուածի մէջ. այս հատուածը 1901 թ. ռուսերէն թարգմանութեամբ տպուել է «Научное Обозрение» ամսագրի մէջ, որից և պ. Մ. Բարխուդարեանը (համակրելի «գրականական և պատմական հանդիս»-ի նախկին խմբագիրը) հայերէն թարգմանելով՝ տալիս է մեզ այս հետաքրքրական երկը:

Այս գրքոյկը կարդալով՝ մարդ միաժամանակ լցում է թէ տխուր և թէ ուրախ զգացմունքներով. տխուր՝ որովհետեւ ցաւում ես տեսնելով՝ թէ ինչպէս հայ չարքաշ մարդիկ իրենց կրօնական սկզբունքներին հաւատարիմ մնալով՝ ամեն տեսակ նեղութիւններ կրելով թողնում են տուն, տեղ, սիրելիների հողակոյտերը և բռնաւոր Ասիայից դիմում Նւրոպա, որ մի փոքր ազատ շունչ քաշեն և ահա այդտեղ էլ նոյն դամոկլեան սուրն է կախուում դրանց գլխին — «փոխիր կրօնական համոզմունքներդ...»:

Միւս կողմից էլ մարդ ուրախանում է, որ հայ մարդը մինչև վերջին րոպէն ուզում է պահել, պահպանել իւր ինքնուրոյնութիւնը, որ չարքաշ աշխատանքով օտար երկրի և օտար ժողովրդի մէջ էլ այնպիսի դիրք է ձեռք բերում, որ նրան յարգում են, որ քաղաքի զօրապետն անգամ «վախեցած վազում է եպիսկոպոսի մօտ և խնդրում, որ եթէ կարելի է, չգրգռէ հայ ժողովուրդը, որի ծնոքումն է նամենց քաղաքը...» (Եջ 37):

Ոգևորիչ է տեսնել մի հայ կնոջ երկաթէ բնաւորութիւնը, իւր կրօնական սկզբունքներին անդրդուելի մնալը, որ նոյն իսկ այդ դէպքում, երբ ամենքը ստիպուած են լինում ընդունել միութիւնը և բոլոր եկեղեցիներում կաթոլիկ ծիսով պատարագելը, Սեֆերովիչն իրեն համար առանձին մատուռ է չինել տալիս և իւր համոզումների համեմատ պաշտում իւր Աստծուն: Ահա ձեզ կամքի ոյժ, ահա հաստատուն բնաւորութիւն.

հոգեբանօրէն շատ հետաքրքրական անհատ է կոյս Սեֆերովիչը: Քաղաքի մեծամեծները ժողով են գումարում և չկարողանալով դիմադրել կաթոլիկ եզուիտների խորամանկ միջոցներին, որ սուտ հաւատացնում են ժողովրդին՝ թէ թազաւորն ու թագուհին էլ են միութիւն կամենում՝ տհաճութեամբ ուզում է համաձայնել, բայց հենց այդ միջոցին ներս է գալիս ժողովի չհրաւիրուած կոյսը, խօսում է և, «Այս մոլեռանդ հերձուածող կինը բորբոքեց իւր եղբայրակիցների սրտերը... ամենքը ցրուեցան՝ տրամադրուած կռուելով... այսպէս է խօսում կաթոլիկ պատմագիրը...»

Գրքովը հետաքրքրութեամբ է կարդացւում. կան հատուածներ, ուր նկարագրուած են հայ գաղթականների ներքին կեանքից վերցրած գծեր. օրինակ մեր «մատաղ անելու» սովորութիւնը գաղթականները պահպանել են և Լեհաստանում, թէև կաթոլիկ ժամանակագրի պատմածը, եթէ չափազանցրած չէ ծաղրելու մտքով, մի փոքր տարբերում է բուն հայկականից.

«Դորանից յետոյ տեղի ունեցաւ մի նոր, արտասովոր հանդէս. զոհաբերութեան, մատաղի ծէսը, որ հայերը վերցրել են հրէաներից»։ Նրկու մարդ տաճար են բերում ահագին մեծութեան մի եզ, որ զարդարուած է լինում գոյնզգոյն ժապաւէններով. պոզերից զանգուլակներ կախուած, իսկ վրան վառած մոմեր տնկած. եզան մէջքը ծածկուած է լինում սրբուն գորգով, զարդարուած ոսկէ նախշերով և չորս կողմից թանկագին կտորով կարած. «Աստուծուն զոհ նշանակուած եզը դանակով մորթում էին, իսկ նորա թարմ միսն օրհնուած կրակով խորովում էին սեղանի վերայ և բաժանում ժողովրդին»։ յետոյ կաթոլիկ պատմագիրը ծաղրելով պատմում է թէ ինչպէս՝ հրացանի ձայնից խրտնած եզը դուրս է պրծնում եկեղեցուց, ցիր ու ցան է անում վախեցած կանանց, կատաղի կերպով վազվզում է քաղաքում և յետևից ցեխի մէջ քարչ տալիս գորգը՝ «փողոցի տղաները ծափ տալով գոռում էին.— «ահա հայոց սուրբ եզը» (էջ 27)։ Գրքովը վերջանում է հետևեալ բնորոշ խօսքերով. «Երբ թշնամին սպառնում էր Լեհաստանին, հայերը որպէս մի անձ, նորա պաշտպանն էին հանդիսանում... Նւ վերջ ի վերջոյ լեհական հայերից նորա դարձան շահագիններ հայկական ծագումով»։...